

Հ. Ս. Խ. Հ.—Հ. Ժ. Կ.
ԳՅՈՒՂ. ՍՈՑ. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՆՍՏ.
ՊՏԶԱՐԱՆՋԱՐԱՐՈՒԹՅԱԿԱՆ
ԶՈՆԱԼ ԿԱԹԱՆ

Н. К. З.—С. С. Р. А.
ИНСТИТУТ СОЦ. РЕКОНСТРУКЦИИ С.-ХОЗ.
ПЛОДООВОЩНАЯ
ЗОНАЛЬНАЯ СТАНЦИЯ

ՅԵ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՊՏԶԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Е. НАЗАРЯН

Указания по посадке плодовых садов



ԳՅՈՒՂ ՀՐԱՏ
ԽՈՅԴ
ԼԻԽՈՅԳԻՅ
ԽՈՅԴ

1933

ՅԵՐԵՎԱՆ
ԵՐԻՎԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Դյուզեքուտի տպարան
Պատվեր № 458
Դրավիտ № 8792
Տիբաթ 2000

Պատգամագրության զարգացման, նրա հետ կապված ժողովրդական սննդի կոնսերվի արդյունաբերության և երազորութեան պահանջները լրիւ բավարարելու առթիւ կուսակցության և կառավարության վորոշումները մարտական պահանջ են դնում մեր առաջ վերակառուցել գոյութիւն ունեցող պտղատու հին այգիները և ընդարձակել նոր տնկվելիք այգիների տարածութիւնը:

Մինչ այժմ տնկված այգիների մեծ մասը չի բավարարում ռացիոնալ կազմակերպված սոցիալիստական պտղաբուծության պահանջները: պտղաբուծության կազմակերպման գործը համապատասխան տնտեսական մարմինների կողմից մատնված և յեղել ինքնահոսի: Մոռացութեան և տրվել այն հանգամանքը, վոր նոր տնկվելիք այգիների հաջողութիւնից և մեծ չափով կախված պտղաբուծական խորհրդակցութիւնների և կոլտնտեսութիւնների հետագա զարգացման ու ամրապնդման խնդիրները:

Այգետնկման աշխատանքները կազմակերպելիս՝ անհրաժեշտ և հաշիւ առնել նախորդ տարիների սխալները, կանխել այդ սխալները, պայքարելով բոլոր տեսակի կորուստների դեմ:

Այգետնկման ժամանակ պետք է հենվել պտղաբուծական գիտութեան նորագոյն նվաճումների վրա և յեղել ժողովրդական տնտեսութեան պահանջները:

Չպետք է մոռանալ, վոր այգին միամյա կուլտուրա չէ, վոր նա տնկվում է 25-50 տարի և նույնիսկ ավելի ժամանակով: Դրա համար նախաքան այգին տնկելը, հարկավոր է շրջահայաց լինել, նկատի առնել պտղատու այգու զարգացման պայմանները (վայրը, հողամասը, տեսակը, փոփոխակը և այլն), այլապես հետագայում անհնարին կլինի ուղղել թույլ տրված սխալները, վորոնք մեծ կորուստների պատճառ կարող են դառնալ:

Այս մասին է, վոր անագանգում է ՀՍԽՀ ժողկոմխորհի վորոշումը՝ «Գտնել անթույլատրելի ներկայումս կիրառվող պրակտիկական վորոգվող հողերի յուրացումը առանց կոմպլեքս-տնտեսա-կազմակերպական հետազոտման (հողային, կենսաբանական, ոգերևութաբանական, տնտեսական և ագրո-տեխնիկական): Արգելել հետագայում պտղաբուծական խորհ. տնտեսութիւնների կազմակեր-

պուճն առանց լրիվ հիմնավորման, միաժամանակ արգելել պտղատու ծառերի տնկելը առանց Պտղաբանջարաբուծական զոնալ կայանի թույլատվությամբ:

Այս վորոշման կիրառման կապակցությամբ և, վոր Հողօգտագործական կողմից կազմակերպված և նոր յուրացվող հողերի մասնաբաժան հետազոտություն, վորը կտա մեր պտղաբուծական խորհրդատեսությունների և կոլտնտեսությունների հետազոտված, ձառնաչված հողամասերի լրիվ պատկերը և կնպաստի այդ հողամասերի ճիշտ և ռացիոնալ ոգտագործմանը:

Այս գրքույկով նպատակ ունենք ծանոթացնելու խորհ. տնտեսական և կոլտնտեսական աշխատավորություն պտղատու այգիների հողի նախապատրաստման, այգետնկման և այգու խնամքին վերաբերող նորագույն և հիմնական աշխատանքներին:

Խորհրդատեսական և կոլտնտեսական աշխատավորները պարտականություն չեն ունենում ընդհանուր առմամբ խորհրդակցություններում և բերվող այգիների ժողովներում մասնագիտացված, քննություն առնել գրքույկի մեջ արված ցուցմունքները, համեմատել առողջալի հետ, տեղին ոգտագործել այդ ցուցմունքները, յերեան հանել թույլ տված թերությունները և այդ մասին հայտնել Ձոնալ կայանին:

Հասցեն՝ Յերևան, Ռուբենի փողոց № 11, Պտղաբանջարաբուծական Ձոնալ կայան՝ Պտղաբուծական բաժին:

1. ԱՅԳՈՒ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄԸ.

Այգու համար հարմար հողամաս ընտրելուց հետո, առաջին գործը պետք է համարել հողաշինարարական աշխատանքները (գլխավոր շենքերի, արտադրական հողակտորների, կվարտալների, ճանապարհների և վոտոգման ցանցի հատակագծումը):

Այս աշխատանքը կատարելիս առանձին ուշադրություն պետք է դարձնել կվարտալների (հողակտորների) մեծություն, ճանապարհների լայնություն, տնկարքի ձևի, ծառերի հեռավորությունների և վոտոգման ցանցի նպատակահարմար դասավորություն զրա: Իսկ այս անկող համար անհրաժեշտ է նախորդ մշակել աշխատանքի ծրագիրը: Կվարտալների մեծությունը խոշոր նշանակություն ունի այգում կատարվող հիմնական աշխատանքների մեքենայացման համար (հերկ, բուժում, բերքահավաք և այլն): Յեթե տեղի դեբեր հողային և ջրային պայմանները թույլ

են տալիս, անհրաժեշտ է այգին բաժանել մեծ կվարտալների, աշխատանքները մեքենայացնելու և արտադրողականությունը բարձրացնելու համար:

Խոշոր պտղաբուծական խորհրդատեսությունների և կոլտնտեսությունների փորձը ցույց է տվել, վոր կվարտալների մեծությունը պետք է լինի վոչ պակաս, քան 10-20 հեկտար (200 մետր $\times$ 1000 մետրով հավասար է 20 հեկտար, ընդունելով, վոր լայնությունը 200 մետր է և յերկարությունը՝ 1000 մետր): Տնտեսություն գլխավոր ճանապարհները հատակագծելիս այնպես պիտի անել, վոր նրանք իրենց լայնությունը ապահովեն մեքենաների, սայլերի, ֆորգանների ադատ անց ու դարձը, հատկապես սրանց լրիվ բեռնվածության դեպքում: Ընդունված է գլխավոր ճանապարհների տակ թողնել 15-20 մետր տարածություն, իսկ յերկրորդականների (կվարտալների մեջ յեղած ճանապարհների) տակ՝ 10 մետր: Այս չափերը լրիվ ապահովում են մեքենաների և սայլերի ադատ անց ու դարձը:

Տնկվելիք այգին քամու փատներից պաշտպանելու համար այգուն հատկացրած հողի նախապատրաստման աշխատանքների հետ միաժամանակ, և զեռ ավելի շուտ, պետք է սկսվի նաև այգին պաշտպանող կենդանի շերտի տնկման գործը:

Կենդանի շերտ ստեղծելու համար անհրաժեշտ է ուժեղ քամիների դեմ տնկել արագ աճող և լավ ճյուղավորվող ծառեր (բարդի, փշառենի, թթենի, ուռենի): Ծառերը պետք է տնկել, այնպես, վոր քամու կողմից սկսվեն ցածրահասակները և աստիճանաբար տեղի տան բարձրահասակներին. սա կառաջացնի ներքևից վերև ծավալվող մի ալիք, վորը և քամու հոսանքը գեպի վերև կտանի:

Պաշտպանման շերտ կարելի յե կազմել նաև ամեն մի կվարտալի համար առանձին, իշխող քամիներին հակառակ, մեկ կիլոմետր արանքներով: Հատակագծման այս աշխատանքները պետք է կատարել հողաչափական գործիքներով և հատուկ մասնագետի ղեկավարությամբ, հակառակ դեպքում սխալ կատարած հատակագծումը կխանգարի այգու մեքենայացման աշխատանքներին:

2. ՀՈՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.

Նոր տնկվող պտղատու այգու հողամասի նախապատրաստական աշխատանքները սկսվում են նրանով, վոր ամբողջ տա-

11-2610/91

բաժուլթյունը համատարած կերպով հերկում են 30-35 սանտիմետր խորությամբ:

Հողի վարի ժամանակը կախված է այգին տնկելու ժամանակից: Յեթե այգին տնկվելու յե աշնանը, ապա ընտրված հողամասն անհրաժեշտ է նախապատրաստել հուլիս-ոգոստոս ամիսներին, իսկ յեթե տնկվելու յե դարնանը, ապա հողը պետք է հերկել աշնանը՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, վորպեսզի հողն այդ ժամանակամիջոցում նստի և խոնավություն կուտակի իր մեջ: Բացի այդ, այս ժամանակամիջոցում հողը ողափոխվում է, վորի հետևանքով աճում և զարգանում են հողում գործնվող ոգտակար միկրոօրգանիզմները: Այգետնկման հատկացվող հողերում յեթե մինչ այդ նրանք չեն մշակվել, ցանկալի յե առաջին տարիների ընթացքում ցանել բազմամյա կամ միամյա թիթեռնածաղիկ բույսեր (յերեքնուկ, կորնգան առվույտ, վիկա), խոտը վորպես կեր ոգտագործելով տնտեսության անասունների համար կամ թե կանաչ պարարտացում կատարելու նպատակով խոտը կանաչ վիճակում շրջել հողի մեջ հողի կազմը բարելավելու և հողն ազատով հարստացնելու համար:

Ամառվա ընթացքում անհրաժեշտ է հերկված հողամասը անմիջապես վարից հետո փոցխել արհեստաճ կամ դիզադ գոց-խերով, մեծ կոշտերը մանրացնելու համար: Այդ ժամանակամիջոցում, յեթե հողամասը շատ է վարակվում մոլախոտերով, պետք է մեկ յերկու անգամ կուլտիվացիայի յենթարկել (մշակել) մոլախոտերից ազատվելու համար:

Գարնան այգետնկի համար, աշնանից նախապատրաստած հողամասը մնում է առանց մշակելու մինչև վաղ գարնան: Վաղ գարնանը հողի քեջը գալուն պես, նախքան հողամասի հատակագծում, անհրաժեշտ է հերկած հողը կուլտիվացիայի յենթարկել (մշակել) և անմիջապես փոցխել: Յեթե տնտեսությունը հնարավորություն չունի համատարած հերկ կատարելու, այդ դեպքում կարելի յե կատարել ԺԱՊՍՎԵՆԱՁԵՎ վար՝ 3-4 մետր լայնությամբ (նախորդ հատակագծում կատարելով), այն հաշվով, վոր տնկվելիք պտղատու ծառերի շարքերը դասավորվեն հերկված ժապավենի մեջտեղով, այլապես շարքը կարող է ժապավենից դուրս մնալ և առիթ տալ նորից լրացուցիչ վար կատարելու:

Այգետունկը կարելի յե կատարել նաև փոսերի միջոցով բայց այդ ձևը շատ թանգ է նստում, ներկայումս մեքենայացման յենթակա չե, բանուժի մեծ ծախս է պահանջում և այլն:

Փոսերի սխառմով կարելի յե այգետունկ կատարել այնպիսի հողամասերում, վորոնք մեծ թեքություններ ունեն և ներկայումս անհնար է մեքենայացման յենթարկել վարը:

Բացի այդ, շատ թեք լանջերում հողը լվացվում է, և արնկված ծառերի արմատներն աստիճանաբար բացվելով՝ յենթարկվում են չորացման վտանգի: Այս իսկ պատճառով այդպիսի լանջերում հարկավոր է այգետունկը կատարել նախորդ պատրաստված փոսերում և շատ դեպքում կառուցել տերասներ (լանջերի վրա սանդղատաձև հարթություններ):

Փոսերը պետք է փորել 50-80 սանտիմետր լայնությամբ (տրամագծով) և 30-50 ս.մ. խորությամբ, հաշված ստորին յեզրից: Փոսերի լայնությունը և մասնավորապես խորությունը կախված է հողի տեսակից: Յեթե հողի յենթաշերտն անթափանցելի յե արմատների զարգացման համար, ապա այդպիսի հողերում անհրաժեշտ է փոսերը փորել խորը, փխրացնելով անթափանցելի շերտը, վորպեսզի նորատունկ ծառի արմատներն առաջին տարիների ընթացքում նորմալ աճեն և զարգանան:

Աշնանը (գարնան այգետունկի համար) և ամռանը (աշնան այգետունկի համար) նախապատրաստած փոսերը փորելուց հետո պետք է կիսով չափ իր հողով ծածկել և այս վիճակում թողնել մինչև այգետունկը, իսկ համատարած և ժապավենաձև հերկի դեպքում փոսերը փորվում են անմիջապես ծառատնկման ժամանակ, վորոնց մեծությունը պետք է լինի այնքան, վոր ծառի արմատային սխառմը աղատ տեղավորվի այդ փոսերում:

Պետք է իմանալ, վոր խնամքով նախապատրաստված հողամասից են կախված տնկիների ընդունման (կաշկելու տոկոսը) հաջողությունը և նրանց հետագա զարգացումը:

3. ՏՆԿԵԼՈՒ ԶԵՎԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՏՈՒՆԿԵՐԻ ՇԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.

Յերբ արդեն հողամասը հատակագծված և առանձին կլարտալների յե բաժանված պիտի սկսել դժադրման աշխատանքները, այսինքն վորոշել ծառերը տնկելու տեղը կլարտալում: Դրա համար ոգտվում են մետաղյա լարերից, նախորդ լարերի վրա նշելով այն հեռավորությունը, վոր պահանջվում է տվյալ տեսակի կամ փոփոխակի տնկելու համար:

Լարով աշխատելու համար պետք է ոգտագործել հողամասի չորս կողմը տնկված և նրա սահմանն ու մեծությունը վորոշող ցցերը: Լարը պետք է ձգել այդ ցցերի ուղղությամբ, բռնելով հողի լայնության ուղղությունը, նշված տեղերում պետք է ցցեր խմել, վորոնք մինչ այդ թափված պիտի լինեն հողամասում:

շարքերին մտնող հեռավորության վրա: Յցերի մեջ առնված տա-
րածությունը ցույց է տալիս, թե վերտեղ պետք է տնկվեն ծա-
ռերը: Գծագրումը պետք է կատարել մեծ ճշտությամբ, վերապես
դի ծառերը հետ ու առաջ դասավորված չլինեն, այլապես կխան-
դարեն այգու մեքենայացման հետագա աշխատանքներին:

Գոյություն ունեն տնկելու յեկու հիմնական ձևեր՝ ուղղան-
կյուն և յեռանկյուն:

Սույնը սոցիալիստական պտղաբուծական տնտեսություննե-
րում պետք է առավելություն տալ տնկելու ուղղանկյուն-քառա-
կուսի ձևին, յերբ շարքը շարքից և ծառը ծառից նույն հեռավո-
րություն ունեն:

Տնկելու քառակուսի ձևը մյուս ձևերի նկատմամբ ունի այն
առավելությունը, վոր այս ձևով տնկված այգում հնարավոր է
լրիվ կերպով կիրառել հողի մշակման, այգու բուժման և մի շարք
ագրո-ձեռնարկումների մեքենայացումը: Բացի դրանից այգու
այդ ձևի հատակագծումն ավելի հեշտ է կատարել քան ֆնացած
մյուս ձևերի դեպքում: Պետք է ճշտությամբ կանոնավորել ծառե-
րի հեռավորությունը մեկը մյուսից, նկատի ունենալով ծառերի
տեսակն ու փոփոխակը: Այդ անհրաժեշտ է նախ այստեղում,
վոր դա կախված է այն բոլոր ագրո-ձեռնարկումների մեքենա-
յացման հետ, վորոնք գործադրվում են խոշոր տնտեսություննե-
րում, այն է՝ հողի մշակությունը, այգու բուժումը, բերքահավա-
քը և այլն: Բացի դրանից պետք է հաշվի առնել ծառի ծավալը,
այսինքն այն տարածությունը, վորը բռնում է ծառը հասակն
առած ժամանակ, տվյալ շրջանի հողային և կլիմայական պայ-
մաններում:

Հին այգիներում շատ պարզ կերպով աչքի յեն ընկնում այդ
սխախերի հետևանքները: այստեղ ծառերը տնկված են յեղել ի-
րար շատ մատ, վորի պատճառով, նկատելի յե, վոր ծառերի սա-
ղարթները հաճախ միացել են, առանձին ճյուղերը աննորմալ են
զարգացել (դեպի վեր-յույսը) և ներքևի ճյուղերը չորացել, վորով-
յին հիվանդություններով, վորոնց դեմ բավականին դժվար է լի-
նում պայքարել: Այդ բոլորն իրենց հերթին բացասաբար են ան-
դրադառնում ծառի կյանքի տեղություն և բերքի քանակի ու վո-
րակի վրա: Փորձերն ու գիտազնությունները ցույց են տալիս, վոր
նորմալ հեռավորության վրա տնկված ծառերը յերկարակյաց են
լինում, յավ դարգանում և մեծ բերք են տալիս:

Ներքևում արվում է պտղատու այգում ծառերն ըստ տե-
սակների տնկելու հեռավորության աղյուսակը, վոր ընդունված է
Համահայաստանյան Այգեպտղաբանջարաբուծական կոնֆերանսի
կողմից:

№№	Տեսակների անունները	Ծառերի հե- ռավորու- թյունը (մետ- րերով):	Ծառերի թի- վը մեկ հեկ- տարի վրա.
1.	Դեղձենի	6×6	280
2.	Ծիրանի	10×10	100
3.	Սալորենի (դամբուլ)	6×6	280
4.	Կեռասնի	9×9	123
5.	Խնձորենի	9×9	123
6.	Տանձենի	8×8	156
7.	Սերկեիլ	7×7	200

4. ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՓՈՓՈԽԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓՈ- ՇՈՏԻՉՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ.

Պտղատու նոր այգիներ տնկելիս՝ պետք է ղեկավարվել Հա-
մահայաստանյան այգեպտղաբանջարաբուծական կոնֆերանսի վո-
րոշումներով (1933 թ. 9/1-ին), վորոնք վերաբերում են ստան-
դարտ ասսորտիմենտի տարածման խնդրին:

Տնկվելիք պտղատու այգիները չպետք է ունենան տեսակնե-
րի և փոփոխակների բաղմազանություն, այսինքն պիտի տնկել
6-8 փոփոխակ ամեն մի տեսակից և այդ փոփոխակների ընտ-
տրության ժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, թե յերբ և
պտուղը հասնում, և յերբ և բերքը հավաքվում: Սա աշխատանքի
մեջ հետևողականություն է մտցնում և նպաստում է, վոր կոն-
սերվի արդյունաբերություն ու ժողովրդական սննդի մատակարար-
ման գործը կազմակերպվի հաջող և առանց ընդհատումների:

Պետք է խուսափել նաև մեկ կամ յերկու փոփոխակի տնկե-
լուց, վորովհետև պտղատու ծառերի մեծ մասն ինքնափոշոտվող
են, նրանց մեծ մասը բեղմնավորվում են խաչով և փոշոտման

միջոցով (միջատներին, քամու և այլ փոխադրիչների միջոցով փոշին փոփոխակի ծաղկից անցնելով մի այլ փոփոխակի, բեղմնավորում և սրան). որինակ՝ խնձորենին, կեռասենին, ծիրանին և այլն), այն ել վորոշ փոփոխակներով:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ և ծառատեղման ժամանակ հիմնական փոփոխակի հետ դուգնթաց տնկել և ընտրած փոշոտիչը, այլ կերպ մենք ապահովված չենք լինի բերքով: Նույնը մասսիվներում անհրաժեշտ և հաշվի առնել տնկվելիք փոփոխակների առկույաին հարաբերությունը, ապա և ըստ այնմ դասավորել փոշոտիչները շարքերն ըստ նրանց քանակի:

Փոշոտիչներին վերաբերող նման բոլոր տվյալները կարելի չե ստանալ պտղարանջարագուծական դոնալ կայանից:

Փոփոխակի ընտրություն ժամանակ պետք է նկատի առնել, վոր նա լինի տվյալ շրջանին և փոփոխակին հատուկ փոշոտիչ, պետք է մանի շրջանի աստորտիմենտի մեջ և ունենա արդյունաբերական նշանակություն: Բացի դրանից փոշոտիչի և փոշոտվողի ծաղկման շրջանը պետք է համընկնեն իրար, ծաղկումը պետք է ընթանա միաժամանակ և լինի յերկու փոփոխակից վոչ պակաս:

ՓՈՇՈՏԻՉՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԽՈՇՈՐ ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.

Ձև № 1

○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●
○	○	○	+	+	+	●	●	●

Յերեք շարք հիմնական փոփոխակ (+) և յերեքական շարք փոշոտիչ (○)—(●):

Այս ձևն ընդունելի չե այն դեպքում, յերբ յերկու փոփոխակները՝ փոշոտվողը և փոշոտիչը ստանդարտ են պվյալ տնտեսություն համար և ըստ պլանի պետք է տնկվեն հավասար թվով:

Ձև № 2

○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+
○	○	+	+	+	+	●	●	+	+	+	+

Չորս շարք հիմնական փոփոխակ (+) և յերկուական շարք փոշոտիչ (○)—(●):

Յերկրորդ ձևն ընդունելի չե այն դեպքում յերբ փոշոտիչն իբրև ստանդարտ նախատեսված է ավելի քիչ տակոսային հարաբերությամբ քան հիմնական փոփոխակը:

5. ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐԻ (ՏՆԿԻՆԵՐԻ) ՍՏԱՆԴԱՐՏԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

Նախքան տնկիներ ձեռք բերելը յուրաքանչյուր տնտեսություն պետք է նախորոք ունենա տվյալ դյուղատնտեսական շրջանին առաջադրված ստանդարտ տեսակների և փոփոխակների աստորտիմենտը և հիմնվելով սրա վրա, իրենց շրջանին հատուկ տունկիներ ստանալու համար, ժամանակին պահանջ ներկայացնի համապատասխան հիմնարկներին:

Պղատու այգում թույլատրվում է տնկել ԿՈՐԻՉԱՎՈՐՆԵՐԻ միամյա (ծիրանի, դեղձենի և այլն) և ՀՆԴԱՎՈՐՆԵՐԻ միամյա ու յերկամյա տնկիներ (խնձորենի, տանձենի և այլն): Միամյա տնկիները պետք է ունենան 100-110 սանտիմետրից վոչ պակաս բարձրություն:

Կորեղավորները միամյա տունկիները պետք է ունենան լրիվ կազմակերպված սաղարթի մեկ հարկ, բաղկացած վոչ պակաս

3 կանոնավոր դասավորված հիմնական ճյուղերից, յեթե ձևավորումը կատարված է Գոշելի հին սխառնով և վնչ պակաս 2-3 հիմնական ճյուղերից՝ նոր Ամերիկյան ԼիԳԵՐՍՍՅԻՆ սխառնով ձևավորման դեպքում: Ինչ վերաբերում է ՀՆԴԱՎՈՐՆԵՐԻ միամյաններին, նրանք կարող են չունենալ վոչ մի հիմնական ճյուղ, բայց ցանկալի յե առաջին տարվա ընթացքում վորոշ փոփոխականների նկատմամբ ունենալ գոնե մեկ հիմնական ճյուղ. դա հնարավոր է կիրառել յեթե տնկարանում գործը լավ հիմքերի վրա յե գրված:

Յերկամյա հնգավոր տնկիները պետք է ունենան լրիվ կազմակերպված սաղարթի մեկ հարկ, բաղկացած վոչ պակաս յերեք հիմնական ճյուղերից՝ հին սխառնով ձևավորման դեպքում, իսկ նոր Լիգերային սխառնով ձևավորման դեպքում վոչ պակաս մեկ-յերեք հիմնական ճյուղերից:

Տնկիները պետք է հասունացած լինեն և մեխանիկական վնասվածքներ չունենան: Տնկարանում չի թույլատրվում, մատչառ տնկիներից տերևները վաղաժամ հեռացնել: Վաղաժամ (արհեստական) տերևաթափն արգելք է հանդիսանում մատչառ շիվերի զարգացմանն ու ամրապնդմանը, վորի հետևանքով և փայտանյութը չի հաստանում, իսկ այն ծառերը, վորոնց փայտանյութը հասունացած չի, յենթակա յեն ցրտահարման, անգամ ամենաթեթև ցրտերի դեպքում: Այդպիսի տնկիները առաւ լինելու հետեանքով, հաճախ վարակվում են հիվանդութիւններով և արևից, ցրտից և այլն, վնասվածքներ են ստանում, ինչպես որինակ՝ այրվածքներ, ծայրամասերի չորացում և այլն:

Վնասված կամ հիվանդ տնկիները չպետք է տնկել, վորովհետեւ այդպիսիները կամ նույն տարին չորանում են և կամ լավագույն դեպքում մնում են, բայց հիվանդ, վտիտ վիճակում, այսպիսի տնկիներից, վոչ մի արդյունք չպետք է սպասել: Այս բոլորից պարզ է, վոր նման տնկիները պետք է նախորոք խոտանել (հեռացնել) և այդի տեղափոխել միանգամայն առողջ տնկիներ: Ընտրութիւն կատարելուց պետք է զգուշանալ հիվանդ (հատկապես քլորոզով հիվանդ) ցրտահարված, մեխանիկական վնասվածքներ ունեցող ծառերից:

Գլորոզով հիվանդ ծառերի տերևները լինում են գունատ, դեղին գույնի: Այս հիվանդութիւնն առաջացման պատճառները կարող են լինել՝ ա) Հողի աղիութիւնը, բ) Կրծող վնասատուները, վորոնք կրծում են արմատները, հատկապես արմատավորիկը և վրնասվածքներ տալով նպաստում են քլորոզի առաջացմանը, գ) վատ պատվաստը, դ) ցրտահարված արմատային սխառնով, ե) անհամապատասխան պատվաստակալը և այլն: Յերր տնկիների հիմնական ցողունի գույնը փոխված է, դա ապացույց է, վոր նա ցրտահարված է:

Հարկավոր է խոտանել (անպետք համարել) նաև այն տնկիները, վորոնք ունեն խիստ ծոված վերերկրյա մաս, գլխավորապես

պես արմատավորիկի մոտ: Տնկիների արմատային սխառնով պետք է 25-30 ս. մ. յերկարութիւն և 3-4 ճյուղաորութիւն ունենա, առանց վնասվածքների և հիվանդութիւնների: Գաղցկելով (արմատի տակ), չարակիված տնկիները պետք է անմիջապես վոչնչացնել, այրելով տեղն ու տեղը—տնկարանում:

Անհրաժեշտ է նաև լուրջ ուշադրութիւն դարձնել տնկանյութերի տեղափոխման աշխատանքների հաջող կազմակերպման վրա: Տնկիները տեղափոխվում են գնացքով, մեքենայով, սայլերով և ֆորգոններով: Այս բոլոր դեպքերումն էլ պիտի այնպես անել, վոր տնկիները մեխանիկական վնասվածքների չստանան և արմատային սխառնով արևի տակ չցամաքի ու չչորանա: Այս անելու համար անհրաժեշտ է տնկիները, մասնավորապես սրա արմատային սխառնով ծածկել խոնավ խոտով, մամուով, ցանկալի յե կապել և խտրենել մեջ, յեթե տնտեսութեան մեջ խտրենել կան:

6. ՏՆԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՐ.

Յինելով 10. Հայաստանի պտղաբուծական շրջանների հատուկ պայմաններից և այն վորձերից, վորոնք ունեն հարավային միուս շրջանները, պետք է առավելութիւն տալ, աշխատային ծառատեղիանը: Աշխատային ծառատեղիան ունի հետևյալ առավելութիւնները՝

1. Ծառը մինչև գարունը ընտելանում է հողին:

2. Ծառի արմատներն աշնան և ձմռան ընթացքում առաջ են քերում գալյուսի շերտ, մինչև անգամ նկատվում է արմատների աճեցողութիւնը: Աշնանը տնկված ծառը վաղ գարնանն սկսում է առաջ կերպով աճել:

3. Աշնանը տնկած ծառերը, հատկապես առաջին ամառվա ընթացքում ավելի յեն զիմանում չորութեանը, քան գարնանը տնկվածները:

4. Աշնան այգետունկը վորոզիկի շրջաններում ապահովված է լինում ջրով, վորովհետեւ այդ ժամանակ ավելի շատ է ազատ ջուր լինում, քան գարնան ընթացքում:

5. Բանվորական ուժի տեսակետից էլ աշնան ավելի ապահովված ենք լինում, քան գարնանը. վորովհետեւ աշնանը աշխատանքի այնպիսի լարվածութիւն չի լինում, ինչպես գարնանը:

6. Հայաստանի Պտղաբուծական շրջաններում աշունը յերկար է լինում և բարենպաստ, իսկ գարունը՝ կարճ և չոր:

Աշնան ծառետունկն ունի նույնպես իրեն ժամկետները:

Հայաստանում այդ աշխատանքները պիտի սկսել՝ դաշտավայրերում նոյեմբերի 1-15-ը իսկ նախախոտային շրջաններում՝ հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 5-ը: Ո՞ր աշնանը տնկված ծառերը բացասական արդյունք են տալիս:

Մասնավորապես աշնան ծառատեղիան ժամանակ պետք է

հատուկ և լուրջ ուշադրություն դարձնել տնկարանից ստացված տնկիչների վրա, վորպեսզի սրանց փայտանյութը հասունացած լինի, այլապես հնազանդացած տնկիչները ձմռան ընթացքում կարող են հեղուկացած ֆլուիդի ցրտից: Փայտանյութի հասունացման նշաններն են՝

Աճեցողության կանգ առնելը և բնական տերեւթափը:

Գարնան ծառատունկն անհրաժեշտ և կատարել վաղ գարնանը և վերջացնել վոչ ուշ ապրիլի 20-ից. նախալուծնային շրջաններում՝ մինչև մայիսի մեկը: Ուշ գարնանը տնկված ծառերը մեծ մասամբ առաջին տարին աճեցողություն չեն ունենում, յերբեմն ամառվա շոգերին չդիմանալով՝ չորանում են:

7. ՏՆԿԻՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.

Տնկելուց առաջ անհրաժեշտ է տնկիչները նախապատրաստել հետևյալ կերպ. հեռացնել այն բոլոր հիվանդ և ֆլուսված արմատները, վորոնք ստացվել են տունկը հանելու կամ տեղափոխելու ժամանակ: Յեթե ստացված տնկիչները պետք է տնկվեն մեկ-յերբիկ ուրվա ընթացքում, անհրաժեշտ է նրանց պահել սառը նկուղում, արմատները խնամքով ջրել և ծածկել թարմ խոնավ խոտով:

Այն դեպքում, յերբ տնտեսությունն այս կամ այն պատճառով հնարավորություն չունի ստացված տնկիչները կարճ ժամանակամիջոցում տնկելու, պիտի նրանց համար առու փորել, 25-30 ս. մ. խորությամբ և տնկիչները թեք կամ կիսապառկած դրությամբ շարքով դասավորել առվի մեջ, արմատները խնամքով ծածկել փուխը հողով և անմիջապես ջրել:

Առու հանելը և արմատները ծածկելը հնարավոր է կատարել գութանով, բայց գութանից հետո անհրաժեշտ է բաներով շտկել, վորպեսզի բաց ու դատարկ տարածություններ չմնան և սրա հետևանքով արմատները չչորանան: Իսկ յեթե տնկանյութը պիտի պահել մինչև գարուն, անհրաժեշտ է տնկանյութ թափել մաքուր և քամիներից պաշտպանված հողամասում: Այդ դեպքում անհրաժեշտ է առու հանել ավելի խոր՝ 40-50 ս. մ., տնկիչները դասավորել թեք դրությամբ մեկ շերտով, այնուհետև արմատները ու ցողունի մի մասը ծածկել փուխը ու խոնավ հողով այնպես, վոր ամենից դատարկ տարածություն չմնա: Այդ դեպքում պետք է աստիճանաբար հող ավելացնելով վոտքով թեթև ամրացնել և ապա ջրել:

Ձմռան ընթացքում պիտի հետևել, վոր մկներն ու նապաստակները տնկիչները չփնասեն, ձյուն գալուց պետք է ձյունը կախոտելով կամ մի այլ միջոցով ամրացնել՝ դա մկների դեմ պաշտպանության լավ միջոց է:

Գարնանը, նախ քան տնկելը, հարկավոր է վերանայել տնկիչների արմատային սխտեմը, հեռացնել ֆլուսված արմատները, առողջ արմատների յերկարությունը թողնելով 25-30 ս. մ.:

Փորձերը ցույց են տվել, վոր հարավային չոր պայմաններում, կարճ արմատներով տնկված տունկերի մեծ տոկոսը չի կաշում և ամառվա ընթացքում չորանում են:

Ընդհանրապես պետք է աշխատել, վորքան հնարավոր է քիչ կտրել, վորպեսզի վերքերի թիվը հասնի մինիմումի, բացի դրանից արմատները կտրելիս պիտի աշխատել, վոր վերքի տրամագիծը հնար յեղածին չափ փոքր լինի: Յեթե տնկիչների արմատային սխտեմը տեղափոխության ժամանակ շատ և ցամաքել, այդպիսի տնկիչների արմատները առնվազն 4-ից 6 ժամ պահել չհոսող ջրում:

8. ՏԿԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ.

Ծառատնկման աշխատանքների վրա անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, վորովհետև պտղատու ծառերը միայն կամ յերկամյա բույսեր չեն, վոր հնարավոր լինի հետևյալ տարին անմիջապես ուղղել:

Պտղատու ծառը բաղամայա բույս է, վորի կյանքը նայած տեսակին տևում է 25-100 տարի: Միայն կատարած ազդեցությունները բացասական ազդեցությունն են թողնում ծառի աճեցողության և նրա հետագա պտղաբերության վրա:

Ծառատնկման աշխատանքները կատարվում են յերկու հոգով: սրանցից մեկը բռնում է ծառը, տեղավորելով նրա արմատային սխտեմը նախապես պատրաստված փոսի մեջ այնպես, վոր ծառի արմատավիղը հողի յերեսից լինի վոչ շատ բարձր, վոչ էլ շատ ցածր, վորովհետև շատ խորը տնկելու ժամանակ արմատները, արմատավիղը և ցողունի մի մասը ողի պակասություն կզգան, իսկ շատ յերես տնկելու դեպքում ծառի արմատները կարող են արևահար լինել և չորանալ:

Արմատները հողով ծածկելիս պետք է տունկին թեթև շարժիլ դեպի վեր ու վար. վոր հողը հավասարաչափ լցվի արմատների շուրջը և նրանց հետ անմիջական շփում ունենա: Յերկրորդ բանվորը արմատների վրա հեղհետե հող է լցնում և ծածկում: Այդ ժամանակ առաջին բանվորը յերկու վոտքով ամրացնում է արմատների շուրջը գտնվող հողը: Այս անկուց հետո ծառի շուրջը ափսահակ փոս են շինում, վորպեսզի վոտքման և անձրևի ջրերը կանգ առնեն ծառի շուրջը: Այնուհետև անհրաժեշտ է առանց ուշացնելու լավ ջրել տնկած ծառերը վորպեսզի հողը նստի և արմատների շուրջը դատարկ տարածություն չմնա:

Ուշ աշնանը, նորատունկ ծառերի արմատները ցրտահարությունից պաշտպանելու համար, անհրաժեշտ է գետնից 15-20 ս. մ. բարձրության վրա ծառի շուրջը գտնվող հողը բուռն տալ:

9. ՆՈՐԱՏՈՒՆԿ ԾԱՌԵՐԻ ԽՆԱՄ:

Նորատունկ պտղատու ազգին, հատկապես ընթացքում լուրջ խնամք է պահանջում: Այդ խնամք

ՀՀ Ազգային գրադարան



NL0836864

1. Ժամանակին ջրերը.
2. Ժամանակին հողը փխրեցնելը ծառերի շուրջը (շրջադրոնով տված ագրո-ցուցմունքների համաձայն):
3. Խնամել ծառը (ցողուն, սաղարթ և այլն).
4. Ծառը կանոնավոր ձևավորել և ետել:
5. Ժամանակին պայքարել հիվանդությունների և վնասատուների դեմ. (շրջադրոնով տված ագրո-ցուցմունքների համաձայն):
6. Պաշտպանել այգին կրծողներից և այլ կենդանիներից.
7. Պայքարել մոլախոտերի դեմ:
- Ծառը տնկելուց հետո յեթե հողի խոնավությունը քիչ է անմիջապես ջրեր:

Աշնանը տնկված ծառերի ետը պետք է կտտարել դարնանք այլապես ձմռան ընթացքում ետված ծառերը կարող են ցրտահարվել:

Միամյա տնկիները պետք է ձևավորել ԱՄԵՐԻԿԱՆ ԼԻՊԵՐՍԻՆ ՍԻՍՏԵՄՈՎ, հիմք ընդունելով Պաղա-բանջարաբուծական դոնալ կայանի կողմից այս մասին տրված հրահանգը:

Պետք է հողը հաճախակի փխրացնել, վորպետզի հնարավոր լինի հողի մեջ պահպանել անհրաժեշտ խոնավությունը և պայքարել մոլախոտերի դեմ:

Վերը հիշատակված ագրո-ձեռնարկները կիրառելով, հնարավոր կ'ինի ստեղծել առողջ, բարձրորակ սոցիալիստական պտղաբուծական այգիներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Առաջարան	1-2
1. Այգու հատակադռումը	3-4
2. Հողի նախապատրաստումը	5-6
3. Տնկելու ձևերը և ծառատունկերի հեռավորությունը	6-7
4. Տնակների ու փոփոխակների ընտրությունը և փոշոտիչների դասավորման սխեման	7-10
5. Տնկանյութերի (ծմկիների) ստանդարտը և նրանց ընտրությունը	9-11
6. Տնկելու ժամկետը	12-14
7. Տնկիների նախապատրաստումը	13-14
8. Տնկելու տեխնիկան	14-15
9. Նորատունկ ծառերի խնամքը	15-16